

# ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Philosophy – Философия

ԳԵՅՎԻԳ Թ. ՌՈՒՆԻԱՎ<sup>1</sup>

Մելբուրնի համալսարան

## ՓԻԼՈՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԹՎՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴԻ ՓԻԼՈՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ<sup>2</sup>

**Բանալի բառեր՝** Փիլոն Ալեքսանդրացի, հայերեն թարգմանությունները, Փիլոնի գրվածքներ, Փիլոնի երկերի մեկնություններ, Մարեն Նիհոֆ, Գրեգորի Սթերլինգ, Կերին Մետցլեր, Պրոկոպիոս Գազացի, Փիլոնի ժառանգության հետագա ճակատագիրը, միջնադարյան Հայաստան:

### 1. Ներածություն

Այսօր Երևանում ընթերցվող գեկուցումս կցանկանայի սկսել խոստովանություններ: Դեռ վաղուց ձգտում էի հայերեն կարդալ սովորել, բայց այդ ցանկությունս անկատար մնաց: Սա ավելի երկար պատմության մի մասն է: Ես ձեռնամուխ եղա Փիլոնին կարդալուն և ուսումնասիրելուն, երբ սկսել էի իմ դոկտորանտուրան Ամստերդամի Ազատ համալսարանում 1977 թ. մայիսին: Այն ժամանակ իմ նպատակներից մեկը հունական փիլիսոփայության վերաբերյալ գիտելիքներիս հարստացումն էր, և ինձ շատ էր գրավում այն միտքը, որ պետք է

<sup>1</sup> Դեյվիդ Ռունիան Մելբուրնի համալսարանի Պատմության և փիլիսոփայության բաժնի **Professorial Fellow** / առաջատար պրոֆեսոր է և Ավստրալիայի Կաթոլիկ համալսարանի Կրոնի ու գիտական ուսումնասիրության **Critical Inquiry**-ի ինստիտուտի պատվավոր պրոֆեսոր: 1992-2002 թթ. եղել է Նիդերլանդների Լեյդենի համալսարանի անտիկ և միջնադարյան փիլիսոփայության պրոֆեսոր, իսկ 2002-2016 թթ.՝ Մելբուրնի համալսարանի Քուինս ֆոլջի նախագահ: Նրա ուսումնասիրությունների կիցակետում են պլատոնականության պատմությունը, Փիլոն Ալեքսանդրացու երկերն ու գաղափարները և անտիկ դոկտրինայի (անտիկ հեղինակների՝ անցյալի մտածողների ու գաղափարների վերաշարադրանք): 1989-ից *The Studia Philonica Annual* տարեգրքի խմբագիրն է: Փիլոնյան մատենագիտության միջազգային ծրագրի համակարգողն է: Սույն գեկուցումով Գ. Ռունիան (ինչպես նաև հայորդ հոդվածի հեղինակ Աննեվիլո Վան դեն Հոմբ) հանդես է եկել Մատենադարանում 2019 թ. հոկտեմբերի 5-ին:

<sup>2</sup> Անգլերենից թարգմանությունը՝ Գոհար Մուրադյանի:

ուսումնասիրեմ Փիլոնի փիլիսոփայական տրակտատները: Սա անելու համար, իհարկե, պետք է ուսումնասիրեի հայերեն թարգմանված կորպուսը, քանի որ, ինչպես գիտեք, հինգ փիլիսոփայական տրակտատներից երեքը ամբողջությամբ պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ: Այսպիսով, ես գնեցի Թոմասոնի Հայերեն քերականության դասագիրքը և մի մեծ հայերեն բառարան Haras-SOWITZ հրատարակչությունից: Բայց պետք է խոստովանեմ, որ քաջությունս չբավարարեց: Ես դժկամորեն հանգեցի այն եզրակացության, որ հայերեն թարգմանության քողի ներքո այս աշխատանքներն իսկապես հասկանալը չափազանց բարդ է, և փոխեցի իմ աշխատանքի թեման ու սկսեցի ուսումնասիրել, թե ինչպես է Փիլոնն օգտագործել Պլատոնի «Տիմեոս»-ը: Այսպիսով, երկար ժամանակ այս գրքերն անօգտագործելի մնացին իմ գրապահարանում, և որոշ ժամանակ անց ես վաճառեցի դրանք:

Սակայն, պատմությունն այսօր ասում է չի ավարտվում: Մի շարք վճռորոշ հատվածներ կային, մասնավորապես «Յաղագս նախախնամութեան» առաջին գրքում, որոնք չափազանց կարևոր էին իմ դոկտորական թեմայի համար: Բայց դրանք հասկանալը բավականին բարդ էր: Արդյունքում, ես դիմեցի հանգուցյալ պրոֆեսոր Յոս Կայտենբերգի օգնությանը, որին, համոզված եմ, շատերը ջերմությամբ եք հիշում: Նա սիրահոժար թարգմանեց հայերեն հատվածները լատիներենի, և մենք ամբողջությամբ քննարկեցինք դրանք: Ես մինչ օրս երախտապարտ եմ նրան: Քսան տարի անց, պրոֆեսոր Մայքլ Սթոունը մի հետազոտական խումբ ձևավորեց Վասենաարի Բարձրագույն ուսումնասիրությունների ինստիտուտում (Նիդերլանդներ): Այնտեղ ես հանդիպեցի դոկտոր էռնա Շիրինյանին և դոկտոր Գոհար Մուրադյանին: Նրանք իմ մեջ Հայաստան այցելելու մեծ ցանկություն արթնացրին, որը մինչ օրս չէր իրականացել:

Ուստի, այսօր ես միանգամայն երջանիկ եմ, որ կարողացա իրականացնել այս երկարամյա երազանքը և այցելել ձեր գեղեցիկ երկիրը: Եվ ինձ համար մեծ պատիվ է, որ ինձ հրավիրել էք դասախոսություն կարգալու այստեղ՝ հռչակավոր Մատենադարանում: Հուսով եմ, որ այն, ինչ ձեզ կներկայացնեմ, հետաքրքիր և, որ ամենակարևորն է, օգտակար կլինի Փիլոնին առնչվող ձեր ուսումնասիրությունների համար: Ես ցանկանում եմ պատմել ձեզ Փիլոնին վերաբերող հետազոտությունների այն վերջին զարգացումների և միտումների մասին, որոնք կապված են հայերեն կորպուսի հետ: Այդ պատճառով, որպես ելակետ եմ վերցնում Սարա Մանչինի Լոմբարդիի ու Պաոլա Պոնտանիի խմբագրած և 2011 «Բրիլլ» հրատարակած Փիլոնի երկերի հին հայերեն թարգմանության ուսումնասիրությունների հատորը<sup>3</sup>: Այստեղ ներկաներից ոմանք իրենց ներդրումն են

<sup>3</sup> *Studies on the Ancient Armenian Version of Philo's Works*, Sara Mancini Lombardi and Paola Pontani (eds.) (Studies in Philo of Alexandria, 6), Brill, Leiden – Boston, 2011. Գրախոսվել է *ԲՄ* № 20, 2014, էջ 482-488 (Գ. Մուրադյան):

ունեցել այս գերազանց հատորում: Այն հիանալի պատկերացում է տալիս մինչ այդ արված հետազոտությունների մասին: Այսպիսով, իմ թեման հենց նրա մասին է, թե որոնք են եղել ամենակարևոր զարգացումները, որ տեղի են ունեցել այդ ժամանակից ի վեր մոտավորապես մի տասնամյակ ընկած ժամանակահատվածում:

## 2. Հայերեն Փիլոնը

Հայերեն կորպուսն ընդգրկում է Փիլոնի 50 երկերից 15-ը, նախած թե ինչպես ենք հաշվում: Այսպիսով, դա 30 տոկոսն է կամ ընդհանուր էջաքանակի 25-ը: Դրանցից իննի սկզբնագրերը չեն պահպանվել: Անվիճելի է, թե որքան կարևոր են դրանք Փիլոնի գործերն ու գաղափարները ճանաչելու համար: Դրանք հստակ երեք մասի են բաժանվում, ինչպես երևում է Ավգերյանի 1892 ու 1826 թթ. և Զարպհանալյանի 1892 թ. հրատարակություններից<sup>4</sup>:

(1) 1822 թ. Ավգերյանը հրատարակեց «Յաղագս նախախնամութեան» Ա և Բ գրքերն ու «Յաղագս բան ունել անասուն կենդանեաց»: Դրանց կարևորությունը վաղուց ի վեր ճանաչված է փիլոնագիտության մեջ, քանի որ երկխոսություններ են և թույլ են տալիս պատկերացում կազմել, թե ինչ զրույցներ է Փիլոնը վարել, կամ կցանկանար վարել, իր ընտանիքում:

Այս գործերից ամենից դժվարը «Յաղագս նախախնամութեան» առաջին գիրքն է: Այն մեզ է հասել ոչ երկխոսության ձևով: Ուսումնասիրողների կարծիքով այն մի ժամանակ երկխոսություն է եղել, սակայն ինչ-որ մի փուլում վերափոխվել է սովորական գրվածքի: Ականավոր փիլոնագետ և հայագետ Աբրահամ Տերչյանը երկար ժամանակ այդ կարծիքին է եղել, բայց վերջերս փոխել է այն և հանգել այն մտքին, որ դա ի սկզբանե էլ քննախոսություն՝ տրակտատ է եղել: Ես զրույցեցի նրա հետ սրա մասին մի քանի տարի առաջ և խնդրեցի հոգված ներկայացնել Տրելս Էնգբերգ-Պեդերսենի կազմակերպած գիտաժողովի համար, որը կայանալու էր Կոպենհագենում, Դանիայում: Գիտաժողովը պիտի քններ Փիլոնի ժամանակ անցումը ստոիկյան մտքից դեպի պլատոնականություն՝ որպես գերիշխող փիլիսոփայական դպրոցի: Նախախնամությանը նվիրված առաջին գիրքն ինձ համար օրինակ էր, քանի որ երկու դպրոցների ուսմունքն էլ ակնառու է այդ գործում: Իմ եզրակացությունն էր՝ նախախնամության մասին փաս-

<sup>4</sup> Փիլոնի եբրայեցույ Բանք երեք չև ի լոյս ընծաեալք, Ա, Բ Յաղագս նախախնամութեան, Գ. Յաղագս կենդանեաց, աշխատասիրութեամբ Մ. Ազերեանց, Վենետիկ, 1822, Փիլոնի եբրայեցույ Մնացորդք ի Հայս, որ են՝ Մեկնութիւն Մննդոց և Ելից, ճառք ի Սամփսոն, ի Յովնան և յերիս մանկունս կամ ի հրեշտակս, աշխատասիրութեամբ Մ. Ազերեանց, Վենետիկ, 1826, Փիլոնի Հեբրայեցույ ճառք, որոց հելլեն բնագիրք հասին առ մեզ, Վենետիկ, 1892 (Զարպհանալյանի անունը գրքում նշված չէ, սակայն հայտնի է, որ նա է աշխատասիրողը):

տարկների հիմնական եզրաբանությունը ստոիկյան դպրոցից են, բայց զլխավոր աստվածաբանական փաստարկները՝ պլատոնական ավանդույթից: Սակայն ի վերջո Փիլոնի հուդայականությունն է նրա դատողությունների շարժիչը:

Այս երկի ավելի նոր ուսումնասիրություն է Ջեյմս Ռոյսի մի հոդվածը: Նա նորովի հայտնաբերել է այս երկի որոշ հունարեն բեկորներ կեղծ-եվստաթիոսի «Վեցօրյայքի» բավական խրթին մեկնության մեջ, հավանաբար մ.թ. V դարում գրված: Ասում եմ «նորովի», քանի որ այդ բեկորները մեկ դար առաջ նկատվել էին, բայց համարյա ամբողջովին անտեսվել: Սա իրադարձություն էր, քանի որ այդ գրքի որևէ այլ պատառիկ երբևիցե հայտնի չի եղել: Իրավիճակը խիստ տարբեր է 2-րդ գրքի պարագայում, որից եվսեբիոսի «Ավետարանական պատրաստությունը» բավական շատ քաղվածքներ է պարունակում: Իրանք քաջ հայտնի են, քանի որ ընդգրկված են Loeb Classical Library շարքում Փիլոնի հրատարակության 9-րդ հատորում: Պրոֆ. Ռոյսը պատրաստվում է հրատարակել վերը նշված բեկորները՝ անշուշտ հաշվի առնելով նաև հայերեն թարգմանությունը, որը նա կարող է կարդալ:

Դժբախտաբար, «Յաղագս Նախախնամության»ը նվիրված երկու գրքերի ուսումնասիրությունը խիստ թերի է, քանի որ դրանք թարգմանված չեն որևէ ժամանակակից լեզվի: Անգլերենը գոյություն չունի, իսկ գերմաներենն ու ֆրանսերենն արվել են Ավգերյանի լատիներեն թարգմանությունից, և ոչ հայերենից: Սա ուշագործ է: Իրականում չգիտեմ՝ արդյո՞ք ամբողջ դասական գրականության մեջ կա ավելի կարևոր երկասիրություն, քան Փիլոնի տրակտատները, որոնք այդքան երկար ժամանակ մնային առանց թարգմանության: Արդեն երկար ժամանակ պրոֆ. Տերյանը խոստանում է հրատարակել իր անգլերեն թարգմանությունը, և իրոք հույս ունեմ, որ նա մոտ ժամանակներս կկատարի իր խոստումը:

(2) Անդրադառնանք Զարպհանայանի 1892 թ. հրատարակած բնագրերին: Սրանք հունաբան դպրոցի թարգմանած գործերն են, և դրանց հունարեն ամբողջական սկզբնագրերն ունենք: Հինգ գրվածք է, հատվածներ ևս երկուսից և մի հատված տասներյակի մասին, որը հունարեն չի պահպանվել: Իրանք անգնահատելի են, քանի որ թույլ են տալիս համեմատել հունարենն ու հայերենը և պատկերացնում կազմել հունաբան թարգմանական տեխնիկայի մասին: Բարեբախտաբար այդ հրատարակությունը բավական վաղ է արվել, ուստի Փիլոնի՝ Քոնի և Վենդլանդի դարակազմիկ քննական հրատարակության (Editio maior) մեջ հղումներ կան դրան: Հետագայում այն քիչ է օգտագործվել փիլոնագիտության մեջ, բայց 2015 թ. Տերյանը մի խորաթափանց հոդված հրատարակեց «Յաղագս տասն բանից»-ի մասին, որում նա քննում է և՛ Կոնի հղումները Զարբանայանի հրատարակած բնագրին, և՛ հայ հրատարակչի լեզվական նշումները: Հոդվածը պարզ ցույց է տալիս, թե որքան շահավետ կարող է լինել այս հավաքածուի հետագա ուսումնասիրությունը:

(3) Անցնենք հայերեն կորպուսի ամենակարևոր մասին՝ Ծննդոց և Ելից գրքերի հարցուպատասխանի (հնդրոց և լուծմանց) մեկնություններին (Ավգե-րեան, 1826): Սրանք կազմում են Փիլոնի մեկնությունների մեկ երրորդը և անգ-նահատելի են Հնգամատյանի մեկնողական ավանդույթի ընկալման համար: Առանց հայերեն թարգմանության այս երկի մեր իմացությունը սահմանափակվե-լու էր ուշ անտիկ և բյուզանդական ծաղկաքաղների մեջբերումներով:

Ժամանակին ես անվանել եմ այդ մեկնությունները փիլոնագիտության «մոխրոտիկներ», քանի որ այդ ժամանակ դրանք նույնպես անտեսվել են: Չեմ կարծում, որ անցած երեսուն տարվա ընթացքում դրությունը հիմնովին փոխ-ված լինի: Անշուշտ այժմ դրանց ավելի հաճախ են անդրադառնում, քան անց-յալում, բայց ոչ այնքան, որքան կարող էր լինել: Հայերեն հրատարակության մեջ չկան դրանք մեկնաբանող ծանոթագրություններ, և շատ քիչ ուսումնասի-րություններ կան նվիրված դրանց հարուստ մեկնողական և փիլիսոփայական բովանդակությանը:

Այս առիթով նշեմ մի նորագույն ուսումնասիրություն, որը մեծ աղմուկ է առաջացրել փիլոնագետների շրջանակներում և ցույց է տվել թե ինչպիսի բա-ցահայտումներ են հնարավոր այս երկերում: Ֆինն գիտնական Սամի Իլի-Կար-յանման 2015 թ. հրատարակեց Փիլոնին և վերամարմնավորման ուսմունքին նվիրված մի գիրք: Նա պնդում է, որ Փիլոնն ընդունում է վերամարմնավորման պլուրազորյան և պլատոնական ուսմունքը, չնայած այն հակասում է աստվա-ծաշնչյան և հրեական պատկերացմանը և չնայած ինքը հազվադեպ է բացահայտ խոսում դրա մասին, միանշանակ՝ միայն չորս անգամ: Երկուսը «Ալաբանական մեկնության» մեջ են, մեկը մի անորոշ ծագումով հատվածում (բայց, հավանա-բար, նույն ալաբանական գրվածքների շարքից), իսկ չորրորդը Ելից գրքի մեկ-նության մեջ է (2.40), որտեղ մեկնվում է Մովսեսին ասածո ասած հետևյալ խոս-քը՝ «Բարձրացի՛ր ինձ մօտ՝ լեռը, այնտեղ եղի՛ր» (Ելից ԻԴ 12): Տպավորիչ կեր-պով զուգակցելով բանասիրական և մեկնողական հմտությունները, Սամին ապացուցում է, որ այդ հատվածը հաստատում է իր դրույթը: Նրա գրքի շուրջ բուն քննարկումներ են ծավալվել, և որոշ փիլոնագետներ համամիտ են նրա կարծիքին: Նս դրանց թվում չեմ և պատրաստվում եմ մի հոգված գրել, որում ցույց եմ տալու, որ Փիլոնն այդ գաղափարի պաշտպանը չէ:

Իմ նշած առաջին և երրորդ խմբի գրվածքների ժամանակագրության հետ կապված կարևոր խնդիրներ կան՝ ե՞րբ է Փիլոնը հորինել իր փիլիսոփայական գրվածքները, իսկ երբ՝ հարցուպատասխանների գրքերը: Այդ մասին ստորև: Նախ կուզենայի խոսել Փիլոնի գրվածքների արդի մեկնաբանումների մասին:

## (4) Փիլոնի երկերի ուսումնասիրություններ

Փիլոնի հայերեն բնագրերի մերօրյա մեկնություններ չկան՝ մեկ բացառությամբ: 1988 թ. Ֆոլկեր Ջիգերտը հրատարակեց «Յաղագս աստուծոյ» խորագրով հայտնի հատվածի վերաթարգմանությունը հայերենից հունարենի՝ լեզվին ու բովանդակությանը վերաբերող մանրամասն ծանոթագրություններով: Հրատարակել է նույն բնագրի գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն թարգմանություններ: Վերջերս Ա. Տերյանն է անդրադարձել այդ բնագրին՝ քննադատելով Ջիգերտի հետադարձ թարգմանությունը, պնդելով, որ հայերենի և սկզբնագրի միջև տառացի համապատասխանության սկզբունքն այնքան էլ միագիծ չէ, որքան կարծել են: Թարգմանիչների կիրառած հնարքները բազմապիսի են եղել. երբեմն նրանք խիստ ընդօրինակում են հունարենը, բայց այլ դեպքերում՝ հեռանում, ինչպես ցույց է տվել Ռոմանո Սգարբին: Տերյանը եզրակացրել է, որ Ջիգերտի կատարած աշխատանքը պարզապես թարգմանություն է՝ ոչ թե մի մերօրյա, այլ հին լեզվի: Ինքն էլ նույն հոգվածում բերել է հայերեն նոր բնագիր և դրա տառացի անգլերեն թարգմանությունը: Սակայն բովանդակային որևէ մեկնաբանություն չի արել:

Անդրադառնամ վերջին քսան տարվա փիլոնագիտությունը: Խոսքս նրա գրվածքները մեկնաբանող աշխատությունների մասին է: Նման մեկնաբանություններ գրելը սովորական երևույթ է անտիկ գրականության և նորկտակարանյան, ավելի քիչ չափով՝ հայրաբանական գրվածքների ուսումնասիրություններում: 1995 թ. պրոֆ. Գրեգ Սթերլինգը Նոտր Դամի համալսարանից նախաձեռնեց փիլոնյան երկերի մեկնությունների շարքը՝ Philo of Alexandria Commentary Series: Նպատակը Փիլոնի գործերն ավելի մատչելի դարձնելն էր ինչպես մասնագետների, այնպես էլ լայն ընթերցողի համար: Ամեն հատոր պարունակում է դյուրընթեռնելի անգլերեն թարգմանություն, մանրամասն առաջաբան և ծանոթագրություններ, որոնք բացատրում են տվյալ գործի կառուցվածքը, լուսաբանում մտքի ընթացքը և քննարկվող խնդիրները: Գործն ավելի դանդաղ ընթացավ, քան ցանկալի կլիներ: Մինչ օրս ունենք 4 գիրք՝ իմ De officio, 2001 թ., Պիտեր վան դեր Հարսթի In Flaccum, 2003, Ուոլթեր Ուիլսոնի De virtutibus, 2011, և իմ ու իմ նախկին ուսանող Ալբերտ Գելջոնի De agricultura, 2013: Երկուսս վերջերս ավարտել ենք Նոյին նվիրված գրվածքներից De plantatione-ի մեկնությունը, որ տպվելու է հոկտեմբերին: Շատ ուրիշներ նախապատրաստական փուլում են: De Abrahamo-ն և De vita contemplativa-ն հավանաբար լույս կտեսնեն մյուս տարի: Երկուսի հայերեն թարգմանությունն ունենք՝ «Կեանք իմաստնոց» և «Յաղագս կենաց վարուց տեսականի»: Շարքի առանձնահատկություններից մեկն այն է, որ մեկնությունները խորամուխ չեն լինում բանասիրական հարցերի մեջ, ուստի չեմ ակնկալում, որ հայերեն թարգմանությունը գրանցում հաճախ հիշատակվի: Փիլոնի երկերի մեկնություններ գրվում են նաև այլ լեզուներով:

Այսօր միայն հայերեն պահպանված երկերի նմանօրինակ քննություններ ծրագրված չեն: Հուսով եմ, որ առաջիկայում այդպիսիք կգրվեն: Վստահ եմ, որ պրոֆ. Սթերլինգը շահագրգռված կլինի, եթե որևէ մեկը ձեռնամուխ լինի այդ գործին: Նշեմ, որ այդ գործի լավ սկիզբ է Ծննդոց և Ելից մեկնություններից ընտրված հատվածների թարգմանությունը, որն իրականացրել են Արամ Թոփչյանը և Գոհար Մուրադյանը Աստվածաշնչին վերաբերող հին հրեական գրվածքների հսկայածավալ հավաքածուի մեջ (2013), որը տարօրինակ վերնագիր է կրում՝ «Աստվածաշնչից դուրս» (Outside the Bible): Մինչ այդ, անշուշտ, պետք է ծանրանալ հայերեն Փիլոնի բնագրի և բովանդակության վրա:

Մի առաջարկ անեմ: Այդ մեկնությունները վերաբերում են Ծննդոց և Ելից գրքերի բազում հատվածների: Հաճախ դրանք նույնանուն են «Այլաբանական մեկնության» մեջ մեկնվածների հետ: Կավ կլինեք պատրաստել այդ երկվորյակ հատվածների համակարգված բաղդատություն: Տարիներ առաջ Sze-Kar Wan-ն իր Հարվարդի ատենախոսության մեջ սկսել է այդ գործը, բայց երբեք չի հրատարակել դրա արդյունքները, զբաղվելով այլ թեմաներով: Այսպիսի համեմատությունը կվերհասներ մեկնության շատ բնորոշ գծեր:

### 3. Փիլոնին հասկանալու նոր ուղիներ

Թողնենք բնագրերը և անցնենք ավելի ընդհանուր հարցերի: Որո՞նք են այսօրվա գիտնականների՝ Փիլոնին կարդալու և մեկնաբանալու ուղիները: Օգտագործելով Թոմաս Քուհնի արտահայտությունը, ասեմ, որ տեսանելի է մի համակարգային տեղաշարժ (*a paradigm shift*), որը մեզ նոր ուղղություններով է տանում:

Այդ փոփոխությունը տեղի ունեցավ մեկ սերունդ առաջ՝ մեծ ֆրանսիացի հրեա գիտնական Վալենտին Նիկիպորովեցկու գործերում: Նա պնդում էր, որ Փիլոնի երկերի ու մտքի ուսումնասիրությունը փիլիսոփայական և աստվածաբանական տեսանկյունից սխալ մոտեցում է: Փիլոնն ինքն իրեն առաջին հերթին դիտում էր որպես Աստվածաշնչի մեկնիչ: Նա ուզում էր պաշտպանել իր ժողովրդին մտավոր հարձակումներից՝ բացահայտելով Մովսեսի գրքերում եղած հարստությունն ու իմաստնությունը: Դրա համար էր նա դիմում հունական փիլիսոփայությունը՝ որպես բանականության լեզվի, ինչը թույլ էր տալիս իրեն բացատրել այդ իմաստնության թաքուն ծալքերը: Փիլոնն անշուշտ հսկայական շափով պարտական է հունական փիլիսոփայությանը, հատկապես՝ պլատոնականությանն ու ստոիկյան մտքին, և դրանք անշուշտ ազդում են Սուրբ գրքի նրա ընթերցման վրա: Բայց նրա համար դրանց ճշմարտությունը ծագում է Աստվածաշնչում ներկայությունից, այլ ոչ թե դրսից է տրված: Փիլոնի նպատակի և մեթոդների Նիկիպորովեցկու ընկալումը շատ օգտակար էր ինձ համար, երբ գրում

էի թեզս՝ նվիրված Փիլոնին և Պլատոնի «Տիմեոս» տիեզերագիտական տրամախոսությունն ինչպես նաև ընկալմանը: Երեք տասնամյակից ավել Փիլոնին հասկանալու համար մեկնություն դերի նրա ընդգծումը շատ արդյունավետ է եղել փիլոնագիտության համար: Փիլոնագետների մեծ մասը գիտակցում են, որ նա առաջին հերթին Աստվածաշնչի մեկնիչ է: Այդ է պատճառը, որ նրա գրվածքների մեծ մասը Մովսեսի գրքերի և մովսիսական օրենքի մեկնություններ են: Նույնը կարելի է ասել Փիլոնի հայերեն բնագրերի մասին:

Ներկայումս փորձ է արվում որդեգրելու Փիլոնի մեկ այլ ընկալում՝ նրա նվաճումները դնելով նրա կյանքի և Ալեքսանդրիայի հրեական համայնքում նրա դիրքի կոնտեքստում: Նշեմ իսրայելացի գիտնական Մարեն Նիհոֆին և Գրեգ Սթերլինգին, որ այժմ ԱՄՆ-ում Յեյլի համալսարանի Divinity School-ի (աստվածաբանության ֆակուլտետի) դեկանն է: Նախ բացատրեմ նրանց հայացքները, հետո անցնեմ նրան, թե ինչ նշանակություն ունեն հայերեն կորպուսը հասկանալու համար:

Անցյալ տարի պրոֆ. Նիհոֆը հրատարակեց Philo of Alexandria: an Intellectual Biography՝ «Փիլոն Ալեքսանդրացի. մտավոր կենսագրություն» գիրքը: Ընդհանուր տեղի է եղել, որ Փիլոնի կյանքի մասին քիչ բան գիտենք: Իր մասին նա միշտ ընդհանուր բաներ է ասում: Անգամ չգիտենք՝ նա ամուսնացած եղե՞լ է, ունեցե՞լ է երեխաներ: Միակ հայտնի դեպքն այն է, որ նա ճամփորդել է Հռոմ, որպես Ալեքսանդրիայի հրեաների պատվիրակության գլուխ, որտեղ իր համայնքի պահանջներն է ներկայացրել Գայուս Կալիգուլա կայսերը: Ուրեմն ինչպե՞ս կարելի է նրա կենսագրությունը գրել: Նիհոֆը գրում է, որ Փիլոնի կյանքի և զարգացման շատ պահերի մասին կարելի է սոսկ ենթադրություն անել: Բայց նրա գրքի խորագրում բանալի բառը «մտավոր»-ն է: Նիհոֆը ցանկանում է ցույց տալ, թե ինչպես է զարգացել Փիլոնի մտածողությունը: Այդ փորձի կենտրոնում նրա երկերի քննությունն է, հատկապես՝ փիլոնագիտության մեջ երկար ժամանակ ընդունված այն կարծիքը, որ դրանք հասկանալու համար կարևոր է գիտակցել Փիլոնի մեկնողական երկերը ներկայացված են երեք մեծ շարքով՝ «Այլաբանական մեկնությունը», «Օրենքի մեկնությունը», և Ծննդոց ու Նլից գրքերին վերաբերող հարցուպատասխանները:

Սակայն այս կարծիքը որքան էլ հին է, այն ծանոթ չէ ուսումնասիրողներին իր բոլոր հետևանքներով: Օրինակ, Փիլոնի համարյա բոլոր հրատարակություններում և թարգմանություններում De opificio mundi-ին հետևում է Legum allegoriae-ն, մինչդեռ առաջին երկը «Օրենքի մեկնություն» շարքի սկիզբն է, իսկ վերջինը՝ այլաբանական մեկնությունների սկիզբը: Նորագույն փիլոնագիտությանը հատուկ է գիտակցելը, որ Փիլոնը երեք տիպի մեկնություններ է գրել, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է սեփական մեթոդն ու նպատակը: Ուստի դա պետք է հաշվի առնվի և դրանց պատկանող բնագրերը շխառնվեն իրար: Նիհոֆի կենսագրական գիրքը նոր մակարդակի է բարձրացնում այս ընկալումը:



Հիմնական փաստարկն այն է, որ այդ կարևորագույն աշխատություններից ամեն մեկը կարելի է կապել Փիլոնի կյանքի որևէ փուլի հետ: Լուրջ հիմքեր կան մտածելու, որ «Օրենքի մեկնություն» շարքը գրվել է նրա կյանքի վերջին, մտավորապես Հռոմ ուղևորվելու շրջանում: Հատկապես De specialibus legibus-ի 3-րդ գրքի սկզբում նրա հայտնի գանգատը, թե քաղաքացիական խնդիրները շեղում են իրեն ուսումնասիրություններից, այդ փաստի ցուցիչն է: Ընդհակառակը, այլաբանական մեկնությունները վկայում են ուսման և մտահայեցողության երջանիկ ժամանակի մասին: Այս երկու մեծ գործերը երկու բևեռ են կազմում Նիհոֆի կենսագրականում՝ մեկը երիտասարդ Փիլոնի գործն է, մյուսը՝ հասուն: Մնում է պարզել երրորդ մեծ գործի՝ Մենդոց և Ելից մեկնությունների տեղը:

Նիհոֆն ավելի հեռու է գնում, ենթադրելով, որ Փիլոնն իր դեսպանության առիթով երկար է մնացել Հռոմում՝ մինչև երեք կամ չորս տարի: Այդ ընթացքում նա երկար զրույցներ է ունեցել Հռոմի մտավորականների հետ, որոնք հիմնականում ստոիկյան հայացքների կրող էին՝ ծանրանալով գործնական բարոյականության հարցերի վրա: Դրանք մեծապես ազդել են նրա հայացքների ձևավորման վրա: Ուստի վաղ շրջանի այլաբանական մեկնությունը մի բևեռ է, որում իշխող են աստվածային անդրանցականության (տրանսցենդենտալության) պլատոնական գաղափարները և հոգու շեշտադրումը, և մեկ այլ բևեռ է ուշ շրջանը, որում նա հուդայականության ավելի գիտակցված պաշտպան է և կիրառում է ստոիկյան գաղափարներ՝ բացատրելու համար Օրենքի պարտադրանքները և կրոնապաշտ հրեայի կյանքը: Նրա փիլիսոփայական տրամախոսությունները, որոնք պարունակում են ստոիկյան շատ թեմաներ, նույնպես պետք է գետեղել նրա կյանքի ուշ շրջանում:

Հնարավոր չէ համառոտակի գնահատել Նիհոֆի գրքի բոլոր արժանիքները ելույթիս այս կարճ դրվագում: Այն բազում գաղափարների խթաններ է պարունակում և արդեն կրքոտ քննարկումներ է առաջ բերել: Դեռ ժամանակ է պահանջվում, որ գիտնականները վերջնական դատավճիռ կայացնեն նրա համարձակ պնդումների վերաբերյալ: Երկու կարճ նկատառում: Չնայած Փիլոնի կյանքի ընդհանուր ժամանակագրություն կարելի է համոզիչ կերպով ուրվագծել, սատանան թաքնված է մանրամասների մեջ: Նիհոֆը փորձում է մտավոր զարգացումը ցույց տալ՝ ենթադրություններ կառուցելով, ասես դրանք փաստեր լինեն: Վկայություն չկա, որ Փիլոնն այդքան ժամանակ մնացել է Հռոմում: Հնարավոր է, նա սկսել է «Օրենքի մեկնությունը» իր դեսպանությունից քիչ առաջ: Երբ գանգատվում է իր քաղաքացիական պարտականություններից, հավանաբար այդ գործի տասից ութ երկերը գրված էին: Երկրորդ՝ Նիհոֆը հավանաբար ընկել է այսպես կոչված գենետիկ կամ զարգացման մեթոդի թակարդի մեջ: Երբ մեկի հայացքներում երկու հզոր ուղղություն ենք նկատում, գայթակղություն

կա ենթադրելու, որ զարգացում է տեղի ունեցել մեկից մյուսին: Բայց պարտադիր չէ, որ այդպես լինի: Դրանք կարող են ավելի երկար կամ կարճ ժամանակ գոյակցել: Փիլոնի գաղափարներում մի կողմից պլատոնական և տրանսցենդենտալ հայացքներ կան, բայց մյուս կողմից դրանց հատուկ են ստոիկյան և ներունակության՝ իմմանենտության գծեր: Նա ապրել է այս երկու գերիշխող փիլիսոփայական հոսանքների անցման փուլում: Տեսանք, որ երկուսն էլ ուրվագծվում են Նախախնամությանը նվիրված գրքերում: Հանդուգն քայլ է պնդելը, թե դրանք նրա կյանքի տարբեր փուլեր են ներկայացնում:

Պրոֆ. Գրեգ Սթերլինգը, որին արդեն հիշեցինք Փիլոնի երկերի ծանոթագրված մատենաշարի առնչությունում, վաղուց մտադրություն ունի ամփոփելու Փիլոնի մասին իր հայացքները մեկ հատորում: Բայց վերջին տարիներին նա մի շարք կարևոր հոդվածներ է գրել Փիլոնի և նրա այնքսանդրյան միջավայրի մասին՝ ծանրանալով Փիլոնի գործունեության կոնտեքստի վրա: 1999-ին նա գրել է Փիլոնի գրվածքների հասարակական հենքի մասին, վերադառնալով այդ հարցին 2017 թ. երկու հոդվածում: Նրա կարծիքով Փիլոնի աստվածաշնչյան մեկնությունների ամենից հավանական նպատակը ուսուցողականն է: Փիլոնին չպետք է կյանքից կտրված մի գիտնական պատկերացնենք: Նա հավանաբար մասնավոր դպրոց է ունեցել, որտեղ աշակերտները քննարկել են մեկնողական և փիլիսոփայական հարցեր: Հավանական է, որ նա իր երկերը գրել է այսպիսի աշակերտների նկատի առնելով: Փիլիսոփայական տրամախոսությունները, հատկապես «Յաղագս կենդանեաց»-ը, դրա վկայությունն են: Սթերլինգը համեմատում է Փիլոնի գրվածքները հունական և հրեական այլ գործերի հետ, նշելով, որ Փիլոնի մեկնությունները կարող էին կապված լինել «աղոթքի տան» կամ մի մասնավոր տան հետ, վերջինն ավելի հավանական համարելով: Իր վերջին հոդվածում նա բացատրում է, թե ինչպես է ընկալում երեք մեծ մեկնողական շարքերի գործառույթը: Ծննդոց և Ելից մեկնությունները պետք է որ լինեին սկանակ աշակերտների համար կամ մի ուղեցույցի դեր կատարեին, որոնք Սուրբ բնագիրը մեկնաբանելու տարբերակներ են առաջարկում: Այլաբանական մեկնությունն ավելի առաջացած աշակերտների համար էր, իսկ «Օրենքի մեկնությունը»՝ իր ավելի լայն ընդգրկումով, կարող էր փորձ լինել դուրս գալու դպրոցի և հուդայականության շրջանակներից՝ դեպի աշխարհ: Երիտասարդ բրիտանացի գիտնական Ադամսը համաձայնում է, որ Ծննդոց և Ելից մեկնությունները կարող էին որպես դպրոցական դասագիրք ծառայել և որ Փիլոնը հարցուպատասխանի ձևը կիրառել է իր դպրոցում: Չէ՞ որ նա հաճախ իր առաջադրած հարցերին մի քանի պատասխանի տարբերակ է առաջարկում:

Նիհոֆը որդեգրել է մի նման, բայց և փոքր ինչ տարբերվող մոտեցում: Նա համաձայն է, որ դպրոցական միջավայրը կարևոր է Փիլոնի համար, սակայն դա էլ է գետեղում զարգացման ժամանակագրության մեջ: Այլաբանական մեկնությունը ներկայացվում է որպես երիտասարդ Փիլոնի մի մենեթություն փորձ:

Որպես բազմաթիվ հրեա մեկնիչներից մեկը՝ նա կիրառում է ալեքսանդրյան բանասիրական ավանդույթի մեթոդները՝ այլաբանության և հոգեդեմոստրացիան առնչվող ուրտներ հետազոտելու համար: Իսկ իր ուսմունքի կողմը շատ մարդ գրավելուց հետո նա իր աշակերտների համար մի ավելի դյուրըմբռնելի մեթոդ է մշակել Մնդոց և Ելից մեկնություններով, որոնցում նա ուսուցչի հեղինակավոր դիրք է ընդունում: Նա ավելի խիստ է դառնում քննադատության հանդեպ, բայց միևնույն ժամանակ պարզեցնում է իր մեթոդը և մշակում ուսուցանելու ավելի հեշտընկալելի ձևեր: Տառացի մեկնության ներմուծումը օգնում է այդ գործում, ինչպես և այլաբանական մոտեցումների նրա առաջարկած բազմազանությունը: Փիլոնի հաջողությունները ուսուցչության բնագավառում պետք է նախապատրաստեին նրա դիվանագիտական գործունեությունը Հռոմում:

#### 4. Փիլոնի ժառանգության հետագա կյանքը

Անդրադառնամ փիլոնագիտության մեկ այլ ճյուղի, որը թերևս ամենից հետաքրքիրը կլինի հայագետների համար: Նկատի ունեմ հետագա դարերում Փիլոնի երկերի և գաղափարների ճակատագրի հանդեպ գիտական հետաքրքրության աճը՝ սկսած վաղբրիստոնեական ժամանակներից մինչ օրս: Փիլոնի երկերը հայերեն թարգմանելը անշուշտ այդ երկար շղթայի մի օղակն է, սակայն շատ կարևոր, քանի որ այն պահպանել է նրա բազմաթիվ գործերի բովանդակությունը, որոնք այսպես կորած կլինեին: Դոկտոր Վան դեն Հուբի դասախոսությունը, որը հետևելու է իմին, նույնպես այս ծիրի մեջ է: Փիլոնի ալեքսանդրյան հետևորդների նրա ուսումնասիրությունը կարևոր ներդրում է Փիլոնի հետագա կյանքի վճռորոշ վաղ շրջանի մեջ, երբ բոլորովին պարզ չէր, արդյո՞ք կգոյատևեն նրա գրվածքները:

Ինձ մոտ հետաքրքրություն առաջացավ Փիլոնի հետագա ճակատագրի հանդեպ, երբ որոշեցի վաղ քրիստոնեական գրականության մեջ նրա ներկայություն մի ակնարկ պատրաստել: Ուսումնասիրեցի մինչև 400 թ. հասնող նյութը, և հատորը լույս տեսավ 1993 թ.: Նպատակը խնդրի հանդեպ հետաքրքրություն առաջացնելն էր, և ուրախությամբ արձանագրեմ, որ այն հասավ իր նպատակին: Նշեմ դրանից հետո տեղի ունեցած մի շարք զարգացումներ:

Նախ, կարևոր ուսումնասիրություն ի հայտ եկավ Փիլոնի ալեքսանդրյան վաղ ընթերցողների վերաբերյալ: Հասկանալի է, որ դրանք քրիստոնյաներ էին, քանի որ Փիլոնի մահից հետո Ալեքսանդրիայի հրեական համայնքը մեծ աղետի ենթարկվեց, ինչը նշանակում էր այդ քաղաքում հելլենիստական հուդայականության վերջ: Անշուշտ եթե Փիլոնի գործերի վաղ քրիստոնյա ընթերցողները շինեին, դրանք չէին պահպանվի: Դ-ր Վան դեն Հուբը արդեն սկսել էր Կղեմես Ալեքսանդրացու իր ուսումնասիրությունը, երբ ես գրեցի գիրքս, և դրանից հետո շարունակել է Օրիգենեսի և ուրիշների իր կարևոր քննությունները: Եղել է

IV դարի մեկնիչ Դիդիմոս Կոչյրի կարևոր ուսումնասիրություն, նաև եվսեբիոս Կեսարացու և կապպադոկյան հայրերի, որոնք ալեքսանդրյան ավանդույթի ծիրում են:

Ալեքսանդրյան ավանդույթին հարող մեկ այլ դեմք կա, որը թերևս պակաս հայտնի է, բայց կցանկանայի մի փոքր ավել կանգ առնել նրա վրա, քանի որ այդ ուսումնասիրությունները կարևոր են հայկական կորպուսի համար: Խոսքս VI դարի քրիստոնյա ճարտասան և ուսուցիչ Պրոկոպիոս Գազացու մասին է: Նրա հիմնական աշխատությունը Յոթամատյանի մեկնությունն է Մենդոց գրքից մինչև Գատավորներ: Ինչ-որ առումով դա շատ տարօրինակ գործ է բաղկացած եկեղեցու հայրերից քաղված հազարավոր հատվածներից, որոնք «առանց կարերի» կցված են միմյանց և կազմում են Աստվածաշնչի մի սահուն մեկնություն: Իր գրած միակ մասը Մենդոց գրքի մեկնության առաջաբանն է ընդամենը 14 տող: Մնացյալում նրա դերը նյութը քաղելն ու իրար կցելն է: Ի տարբերություն շղթա մեկնությունների (Catena), որոնցից նա մեծապես օգտվում է, նա երբեք չի նշում իր մեջբերած հեղինակների անունները:

Բոլորովին վերջերս գերմանացի գիտնական Կարին Մետցլերը լույս է ընծայել այդ երկի առաջին մասի՝ Մենդոց գրքի մեկնության փառահեղ հրատարակություն և թարգմանություն: Մոտ կեսը փաստորեն հունարեն բնագրի առաջին հրատարակումն է, քանի որ միայն Մենդ. ԺԳ 3-ի մասն է ժամանակին տպել կարդինալ Մային 1818 թ.: Մնացած մասին գիտնականները ծանոթ էին սոսկ 1555 թ. Կոնրադ Քլաուզերի՝ երկի ամբողջական լատիներեն թարգմանությամբ: Նրա մեծագույն խնդիրն էր պարզել մեկնության քաղվածքների աղբյուրները, ինչին օգնում են իր օգտագործած շղթա մեկնություններում առկա անունները, նաև ժամանակակից այնպիսի գործիքներ, ինչպիսին Thesaurus Linguae Graecae-ն է (TLG):

Մեջբերված հեղինակների մեջ առաջին տեղը պատկանում է Փիլոնին՝ մոտ 100 քաղվածք բացառապես Մենդոց գրքի նրա մեկնությունից: Մետցլերի մատնանշած 106 հատվածներից միայն 56-ը կարելի է գտնել Catena on Genesis-ում, ուստի պարզ է, որ Պրոկոպիոսը նաև առաձին է ուսումնասիրել Փիլոնի գործը: Այն կարող էր նրան հասու լինել հավանաբար Կեսարիայի գրադարանում: Պետք է շեշտել, որ այդ հատվածները նոր չէ, որ հայտնի են, քանի որ ընդգրկված են Մենդոց և ելից մեկնության հունական ֆրագմենտների՝ Ֆրանսուազ Պետիտի 1978 թ. փառահեռ հրատարակության մեջ, Les œuvres de Philon d'Alexandrie ֆրանսերեն շարքում: Սակայն այժմ կարելի է տեսնել այդ հունարեն հատվածները իրենց պահպանման ամենակարևոր մի կոնտեքստում՝ գեղեցիկ հրատարակված ու բացատրված: Այն կարող է հետաքրքիր լինել նաև հայերեն Փիլոնի ընթերցողներին՝ տեսնելու հունարեն բնագրի աղբյուրները, որոնց հետ կարող է համեմատվել հայերեն թարգմանությունը: Ավելին, Փիլոնի

երկերի օգտագործումը շղթա-մեկնությունում, որը Պրոկոպիոսն իր հերթին ընդարձակել է իր մեկնության մեջ, հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչու են հունաբան դպրոցի ներկայացուցիչները Փիլոնի գործերի միջից սրանք ընտրել թարգմանելու համար:

Նշեմ ևս մի հոդված, որ վերջերս հրատարակել եմ *Vigiliae Christianae* հանդեսում: 2014 թ. ԱՄՆ Յեյլի համալսարանում փիլոնագիտական գիտաժողով էր, որի նպատակն էր գետեղել Փիլոնին աշխարհագրական, փիլիսոփայական և գաղափարական կոնտեքստում, համեմատելով նրան այլ հին հեղինակների հետ: Մյուս նպատակը նրա հետագա կյանքի և ազդեցության քննությունն էր, հատկապես՝ հրեա և քրիստոնյա ընթերցողների շրջանում: Ես կարդացի Փիլոնը Բյուզանդիայում, 500-1500 թթ., թեմայով գեկուցում: Հավաքել էի այդ շրջանի աղբյուրներից բոլոր հանվանե հիշատակումները, ինչը հնարավոր էր հրաշալի TLG-ի շնորհիվ: Իհարկե, այդ նյութի մի կարևոր մասը Փիլոնի հայերեն կիրառությունն է, ինչպես հայ միջնադարյան թարգմանիչների, այնպես էլ մեկնիչների մոտ: Ես առաջին հերթին օգտագործել եմ դ-րներ Էռնա Շիրինայնի և Օլգա Վարդազարյանի աշխատանքները: Համառոտակի ամփոփելով հայ վարդապետների գործը և նրանց ջանքերով նրա կորպուսի կազմակերպումը որպես մի ամբողջություն, որը կենտրոնացած է հոգևոր վերելքի գաղափարի շուրջ, գեկուցումս ավարտեցի հետևյալ խոսքերով. «Հուզիչ է հոդվածս ավարտելը փաստորեն մի անհայտ ավանդույթի վրա այս կարճ հայացքը նետելով: Վարդապետների այս գրվածքներից ոչ մեկն այսօր հասանելի չէ հայերեն չկարդացողներին, և լիահույս ենք, որ փիլոնագետների նվիրյալ բանակը Հայաստանում այս կարևոր բնագավառում առաջընթաց կապահովի: Տեսանք, որ Բյուզանդական կայսրության կենտրոնում Փիլոնը համեստորեն է ներկայացված: Որքան նշանակալի երևույթ է, որ նա ավելի եռանդով է ուսումնասիրվել կայսրության ծայրամասերում: Անկասկած դեռ շատ բան կա բացահայտելու արևելաքրիստոնեական աշխարհում հրեա հեղինակի ժառանգության մասին»:

Մեկ այլ ծրագրի մասին կցանկանայի խոսել: Այն կազմավորման ընթացքում է և դեռ սկիզբ չի առել: Այն նախաձեռնել են երկու երիտասարդ ամերիկացի գիտնականներ՝ Դեյվիդ Լինսիբումը և Քորթնի Ֆրիզենը, ինձ էլ խնդրել են միանալ իրենց թիմին: Տպագրվելու է 2020 թ. Օքսֆորդի համալսարանի հրատարակչությունում: Ներկայացնելու է Փիլոնի ժառանգության հետագա կյանքի ամենից ամբողջական հավաքածուն: 34 գլուխները գրելու են գրեթե նույն թվով հեղինակներ: Այն սկսում է հրեա պատմիչ Հովսեպոսից և մանրամասն անդրադառնում քրիստոնյա ընթերցողներին՝ ինչպես Արևելքում, այնպես էլ Արևմուտքում: Պարունակում է Փիլոնի հետագա կյանքը բյուզանդական, միջնադարյան, վաղ արդի և արդի շրջաններում, վերջում էլ՝ փիլոնագիտությանը նվիրված վեց գլուխ: Ընդգրկված են այսօրվա երկու բանախոսներն էլ: Բնականաբար մի

գլուխ էլ նվիրված է լինելու հայերեն Փիլոնի կյանքին, որը հանձն է առել դ-ր Օլգա Վարդազարյանը, և, հուսով եմ, նա լավ առաջընթաց է արձանագրել: Սա լինելու է 18-րդ գլուխը, ինչը լավ հնարավորություն է Փիլոնի այդ բացառիկ ավանդույթը զետեղելու խնդրին նվիրված ամենից ընդգրկուն քննության ճիշտ մեջտեղում: Ծրագրի իրագործումը՝ դ-ր Վարդազարյանի հոգվածը ներառյալ, վերին աստիճանի հուզիչ հեռանկար է:

## 5. Վերջաբան

Խոսքիս մեծ մասը նվիրեցի նորագույն փիլոնագիտությանը, գիտակցելով, որ Հայաստանում աշխատող գիտնականների համար մատչելի չեն ամենաթարմ հրատարակությունները՝ առանց երկրից դուրս գալու: Գիտական գրքերն ու պարբերականները շատ թանկ են: Կուզեի ուժերիս ներածի չափով օգնել: Հուսով եմ՝ ձեզ հասանելի է Studia Philonica Annual տարեգիրքը, որում ես և International Philo Bibliography Project-ի անդամները ամեն տարի պատրաստում ենք փիլոնագիտության ծանոթագրված մատենագիտություն: Կոչ եմ անում՝ մի՛ վարանեք դիմել ինձ ձեր ուսումնասիրությունների համար անհրաժեշտ աշխատություններ ձեռք բերելու համար: Կաշխատեմ ուժերիս ներածի չափով օգնել:

## Գրականություն

- S. A. Adams, ‘Philo’s *Questions* and the Adaptation of the Greek Philosophical Curriculum,’ in Jason M. Zurawski and Gabriele Boccaccini (edd.), *Second Temple Jewish “Paideia” in context*, Beihefte zur Zeitschrift für die neutestamentliche Wissenschaft 228 (Berlin: De Gruyter, 2017), 167–84.
- J. B. Aucher, *Philonis Judaei sermones tres hactenus inediti, I. et II. De Providentia et III. De animalibus, ex Armena versione antiquissima ab ipso originali textu Graeco ad verbum stricte exequuta, nunc in Latium (sic!) fideliter translati per* (Venice 1822).
- , *Philonis Judaei paralipomena Armena, libri videlicet quatuor in Genesin, libri duo in Exodum, sermo unus de Sampson, alter de Jona, tertius de tribus angelis Abraamo apparentibus: opera hactenus inedita ex Armena versione antiquissima ab ipso originali textu Graeco ad verbum stricte exequuta saeculo V, nunc in Latium fideliter translata per* (Venice 1826).
- L. Cohn, P. Wendland, and S. Reiter, *Philonis Alexandrini opera quae supersunt*. 6 vols. (Berlin: George Reimer 1896–1915).
- A. C. Geljon and D. T. Runia, *Philo On Cultivation: Introduction, Translation and Commentary*, Philo of Alexandria Commentary Series 4 (Leiden: Brill, 2013).
- , *Philo On Planting: Introduction, Translation and Commentary*, Philo of Alexandria Commentary Series (Leiden: Brill, 2019).

- A. van den Hoek, *Clement of Alexandria and his Use of Philo in the Stromateis: an Early Christian Reshaping of a Jewish Model*, Vigiliae Christianae Supplements 3 (Leiden: E. J. Brill, 1988).
- , ‘Philo and Origen: a Descriptive Catalogue of their Relationship’, *The Studia Philonica Annual* 12 (2000), 44–121.
- , ‘Assessing Philo’s Influence in Christian Alexandria: The Case of Origen,’ in J. L. Kugel (ed.), *Shem in the Tents of Japheth: Essays on the Encounter of Judaism and Hellenism*, Supplements to the Journal for the Study of Judaism 74 (Leiden, 2002), 223–39.
- P. W. van der Horst, *Philo’s Flaccus: The First Pogrom*, Philo of Alexandria Commentary Series 2 (Leiden: Brill, 2003).
- D. Lincicum, C. J. P. Friesen, and D. T. Runia, *The Reception of Philo of Alexandria* (Oxford: Oxford University Press, forthcoming in 2020).
- S. Mancini Lombardi, and P. Pontani (edd.), *Studies on the Ancient Armenian Version of Philo’s Works*, Studies in Philo of Alexandria 6 (Leiden: Brill, 2011).
- K. Metzler, *Prokop von Gaza Eclogarum in libros historicos Veteris Testamenti epitome. Teil 1: Der Genesiskommentar*, Die griechischen christlichen Schriftsteller der ersten Jahrhunderte N.F. 22 (Berlin: De Gruyter, 2015).
- , *Prokop von Gaza Der Genesiskommentar. Aus den “Eclogarum in libros historicos Veteris Testamenti epitome” übersetzt und mit Anmerkungen versehen*, Die griechischen christlichen Schriftsteller der ersten Jahrhunderte N.F. 23 (Berlin: De Gruyter, 2016).
- M. R. Niehoff, *Philo of Alexandria: an Intellectual Biography*, The Anchor Bible Reference Library (New Haven: Yale University Press, 2018).
- V. Nikiprowetzky, *Le commentaire de l’Écriture chez Philon d’Alexandrie: son caractère et sa portée; observations philologiques*, Arbeiten zur Literatur und Geschichte des hellenistischen Judentums 11 (Leiden: E. J. Brill, 1977).
- F. Petit (ed.), *Quaestiones in Genesim et in Exodum: fragmenta graeca*, Les Œuvres de Philon d’Alexandrie 33 (Paris: Éditions du Cerf, 1978).
- J. R. Roysse, ‘Fragments of Philo of Alexandria Preserved in Pseudo-Eustathius’, *The Studia Philonica Annual* 30 (2018), 1–14.
- D. T. Runia, *Philo of Alexandria and the Timaeus of Plato*. 2 vols. (diss. Free University Amsterdam: VU Boekhandel, 1983).
- , *Philo of Alexandria and the Timaeus of Plato*. 2nd ed, Philosophia Antiqua 44 (Leiden: E. J. Brill, 1986).
- , ‘Secondary Texts in Philo’s *Quaestiones*,’ in D. M. Hay (ed.), *Both Literal and Allegorical: Studies in Philo of Alexandria’s Questions and Answers on Genesis and Exodus*, Brown Judaic Studies 232 (Atlanta: Scholars Press, 1991), 47–79.
- , *Philo in Early Christian Literature: a Survey*, Compendia Rerum Iudaicarum ad Novum Testamentum III 3 (Assen: Van Gorcum 1993).

- , *Philo on the Creation of the Cosmos According to Moses*, Philo of Alexandria Commentary Series 1 (Leiden: Brill, 2001).
- , ‘Philo in Byzantium: An Exploration’, *Vigiliae Christianae* 70 (2016), 259–81.
- , ‘From Stoicism to Platonism: The Difficult Case of Philo’s *De Providentia* I,’ in Troels Engberg-Pedersen (ed.), *From Stoicism to Platonism: the Development of Philosophy, 100 BCE to 100 CE*, Cambridge: Cambridge University Press, 2017)159–78.
- , ‘Does Philo accept the Doctrine of Reincarnation’, *SPhiloA* 31 (2019) forthcoming.
- D. T. Runia, and G. E. Sterling (edd.), *The Studia Philonica Annual*, Vols. 1–30, Brown Judaic Studies 324 (Atlanta: Scholars Press, 1989–2018).
- M. E. Shirinian, ‘Philo and the *Book of Causes* by Grigor Abasean,’ in Sara Mancini Lombardi and Paola Pontani (edd.), *Studies on the Ancient Armenian Version of Philo’s Works*, Studies in Philo of Alexandria 6 (Leiden: Brill, 2011)155–89.
- R. Sgarbi, ‘Philo’s Stylemes vs Armenian Translation Stylemes,’ in Sara Mancini Lombardi and Paola Pontani (edd.), *Studies on the Ancient Armenian Version of Philo’s Works*, Studies in Philo of Alexandria 6 (Leiden: Brill 2011) 147–54.
- F. Siegert, *Philon von Alexandrien Über die Gottesbezeichnung “wohltätig verzehrendes Feuer” (De Deo): Rückübersetzung des Fragments aus dem Armenischen, deutsche Übersetzung und Kommentar*, Wissenschaftliche Untersuchungen zum Neuen Testament 46 (Tübingen: J. C. B. Mohr (Paul Siebeck), 1988).
- , ‘Le fragment philonien *De Deo*. Première traduction française avec commentaire et remarques sur le langage métaphorique de Philon,’ in C. Lévy (ed.), *Philon d’Alexandrie et le langage de la philosophie*, Monothéismes et Philosophie (Turnhout 1998)183–228.
- , ‘The Philonian Fragment *De Deo*. First English Translation’, *The Studia Philonica Annual* 10 (1998) 1–33.
- G. E. Sterling, ‘“The School of Sacred Laws”: the Social Setting of Philo’s Treatises’, *Vigiliae Christianae* 53 (1999), 148–64.
- , ‘Philo’s School: The Social Setting of Ancient Commentaries,’ in Beatrice Wyss, Rainer Hirsch-Luipold and Solmeng-Jonas Hirschi (edd.), *Sophisten in Hellenismus und Kaiserzeit: Orte, Methoden und Personen der Bildungsvermittlung*, Studien und Texte zu Antike und Christentum 101 (Tübingen: Mohr Siebeck, 2017), 123–42.
- , ‘The School of Moses in Alexandria: An Attempt to Reconstruct the School of Philo,’ in Gabriele Boccaccini and Jason Zurawski (edd.), *Education in the Ancient World*, BZNW 228 (Berlin: De Gruyter, 2017), 141–66.
- A. Terian, *Philonis Alexandrini de Animalibus: the Armenian text with an introduction, translation and commentary*, Studies in Hellenistic Judaism: Supplements to Studia Philonica 1 (Chico, California: Scholars Press 1981).
- , ‘The Armenian Textual Tradition of Philo’s *De Decalogo*’, *The Studia Philonica Annual* 27 (2015) 143–53.



- , ‘Philonis *De visione trium angelorum ad Abraham*: A New Translation of the Mistitled *De Deo*,’ in Gregory E. Sterling (ed.), *The Studia Philonica Annual Vol. 28* [= *Studies in Philo in Honor of David Runia*], Atlanta: SBL Press, 2016), 77–107.
- A. Topchyan, and G. Muradyan, ‘The Biblical Interpretations of Philo: *Questions and Answers on Genesis and Exodus*,’ in Louis H. Feldman, James L. Kugel and Laurence H. Schiffman (edd.), *Outside the Bible: Ancient Jewish Writings Related to Scripture* (Lincoln, NE: University of Nebraska Press—Jewish Publication Society 2013), 807–881.
- O. S. Vardazaryan, ‘The ‘Armenian Philo’: a Remnant of an Unknown Tradition,’ in Sara Mancini Lombardi and Paola Pontani (edd.), *Studies on the Ancient Armenian Version of Philo’s Works*, *Studies in Philo of Alexandria* 6 (Leiden: Brill, 2011), 191–216.
- S. K. Wan, *The Quaestiones et solutiones in Genesim et in Exodum of Philo Judaeus: a Synoptic Analysis* (diss. Harvard 1992).
- W. T. Wilson, *Philo of Alexandria On Virtues. Introduction, Translation, and Commentary*, *Philo of Alexandria Commentary Series* 3 (Leiden: Brill, 2011).
- S. Yli-Karjanmaa, *Reincarnation in Philo of Alexandria*, *Studia Philonica Monographs* 7 (Atlanta: SBL Publications, 2015).
- G. Zarbhanalean, *P’iloni Hebrayec ‘woy çark’ t’argmanealk’ i naxneac ‘meroc’ oroc’ hellen bnagirk’ hasin ar mez* [*Sermons by Philo the Jew, the Greek originals of which have reached us*] (Venice: Mechitarist Press, 1892).

DAVID T. RUNIA

## THE ARMENIAN CORPUS OF PHILO AND RECENT PHILONIC SCHOLARSHIP

### Keywords:

Philo of Alexandria, Armenian corpus, Philonic treatises, commentaries on Philo, Maren Niehoff, Gregory Sterling, Karin Metzler, Procopius of Gaza, reception of Philo, medieval Armenia

This paper, presented at the Matanedaran in Yerevan in October 2019, undertakes to give a survey of recent developments and trends in Philonic research as they relate to the Armenian corpus of treatises. First recent research on the writings themselves is examined, beginning with the philosophical treatises (Aucher vol. 1), followed by the exegetical writings, first those of which we still have the Greek text (Zarbhanalean), then those of which the Greek text is lost (Aucher vol. 2). Some brief comments are then devoted to recent commentaries on Philo’s works, particularly in the Philo of Alexandria commentary series (PACS). The paper then turns to recent trajectories in understanding Philo, focusing on the work of Maren Niehoff

(an intellectual biography of Philo) and Greg Sterling (the context of Philo's activities). Lastly attention is given to work on Philo's reception in antiquity, with discussion of Metzler's recent edition of Procopius's Genesis commentary and of research on Philo in the Byzantine period, including medieval Armenia. The conclusion is that Philonic scholarship is flourishing, but that there remains much still to do, not least in the area of the reception of his writings and thought.

ДЭЙВИД Т. РУНИА

**АРМЯНСКИЙ ФИЛОНОВСКИЙ КОРПУС И НОВЕЙШИЕ  
ФИЛОНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ**

**Ключевые слова:** Филон Александрийский, армянский корпус, труды Филона, комментарии к Филону, Марен Нихоф, Грегори Стерлинг, Прокопий Газский, рецепция Филона, средневековая Армения.

В статье, представленной в виде доклада в Матенадаране в октябре 2019 года, нами предпринята попытка обзора новейших направлений в исследовании Филона в соотношении с армянским корпусом его сочинений. Во-первых, рассматриваются последние исследования самих его трудов: философских трактатов (изд. М. Авгеряна, т. 1), затем комментаторских трудов – как тех, греческие оригиналы которых сохранились (изд. Г. Зарбанаяна), так и тех, чьи оригиналы до нас не дошли (изд. М. Авгеряна, т. 2). Кратко останавливаемся на новейших комментариях к трудам Филона, в особенности в серии “Комментарии к Филону Александрийскому” (Philo of Alexandria commentary series: PACS). Затем мы обращаемся к сегодняшним путям понимания Филона, с особым вниманием к работе Марен Нихоф (составившей интеллектуальную биографию Филона) и Грега Стерлинга (изучающего социальный контекст деятельности Филона). Наконец, мы останавливаемся на исследованиях рецепции Филона в древности, с обсуждением новейшего издания комментария на книгу Бытия Прокопия Газского (Карен Метцлер) и исследованиях о Филоне в византийский период, включая средневековую Армению. Наш вывод – изучение Филона процветает, однако еще многое предстоит сделать, не в последнюю очередь – в области рецепции его трудов и мысли.